ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թ. նոյեմբերի 4-6-ը Ուզբեկստանի Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Աշոտ Մանուկյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**
   ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Տաշքենդ, Ուզբեկստանի Հանրապետություն, 2017թ. նոյեմբերի 4-6-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտե

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**
   Մասնակցելու ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի 51-րդ նիստին

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**
   Քննարկվեցին նիստի օրակարգով նախատեսված հարցերը՝
   - Համագործակցության անդամ պետությունների էներգահամակարգերի պատրաստման գործընթացները 2017-2018թթ. աշուն-ձմեռ ժամանակահատվածում,
   - Էլեգազային սարքավորումների շահագործման անվտանգության կանոնների ծրագրի վերաբերյալ,
   - Անձնակազմի հետ աշխատանքների և ԱՊՀ էլեկտրաէներգետիկական ոլորտում կադրերի պատրաստման հարցերով աշխատանքային խմբի փաստաթղթերի վերաբերյալ,
   - Սարքավորումների աշխատանքի հուսալիության և աշխատանքի պաշտպանության հարցերով աշխատանքային խմբի փաստաթղթերի վերաբերյալ,
   - «ԱՊՀ շրջանակներում էլեկտրաէներգետիկայի կարգավորման նորմատիվ-տեխնիկական բազայի նորացում և ներդաշնակեցում» աշխատանքային խմբի փաստաթղթերի վերաբերյալ,
   - ԱՊՀ էլեկտրաէներգետիկական ոլորտի չափագիտական ապահովման աշխատանքային խմբի գործունեության վերաբերյալ,
   - ԱՊՀ էլեկտրաէներգետիկական ոլորտի շրջանակներում միջազգային պայմանագրերի վերաբերյալ և ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի նորմատիվ և տեխնիկական փաստաթղթերի վերաբերյալ,
   - Էլեկտրաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի հարցերով աշխատանքային խմբի փաստաթղթերի վերաբերյալ

- Շրջակա միջավայրի պահպանման աշխատանքային խմբի փաստաթղթերի վերաբերյալ,
- ԱՊՀ անդամ-պետությունների էլեկտրաէներգետիկական օբյեկտներում վթարների և ուրիշ արտակարգ իրավիճակների դեպքում համագործակցության համակարգի մշակման աշխատանքային խմբի գործունեության վերաբերյալ,
- 2018թ. ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի միջոցառումների ծրագրի և ԱՊՀ ԷԷԽ և նրա գործադիր կոմիտեի ֆինանսավորման եկամուտների և ծախսերի նախահաշիվների նախագծերի վերաբերյալ,
- ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի հերթական 52-րդ նիստի անցկացման վայրի և ամսաթվի վերաբերյալ,
- Այլ հարցեր:

Նիստում քննարկվել են նաև կադրային հարցեր: ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի պաշտոնում ընտրվել է Իգոր Կուզկոն:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Նիստի շրջանակներում ներկայացրել եմ Հայաստանի էներգետիկայի զարգացման հիմնական ուղղությունները: Անդրադարձ է կատարվել մեր երկրում ատոմային էներգետիկայի զարգացման, առաջնային էներգետիկ պաշարների դիվերսիֆիկացման և գազային ջերմակայանների արտադրության արդյունավետության բարձրացման խնդիրներին: Անդրադարձ է կատարվել նաև երկրի ներքին սպառման կառուցվածքում սեփական վերականգնվող աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի տեսակարար կշռի շարունակական ավելացման ուղղությամբ իրականացվող քայլերին:

Ներկայացնելով ԱՊՀ երկրներում վերականգնվող էներգետիկայի զարգացման գերակայությունների ճանապարհային քարտեզը՝ ՌԴ Էկոնոմիկայի բարձրագույն դպրոցի Վերականգնվող էներգետիկայի զարգացման կենտրոնի ղեկավար Գեորգի Երմոլենկոն ընդգծել է, որ ուսանելի է Հայաստանի փորձը վերականգնվող էներգետիկայի զարգացման և էներգախնայողության բնագավառներում:

Նիստին մասնակցել են Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի, Ղազախստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի և Հայաստանի էներգետիկայի նախարարները, Ուզբեկստանի փոխվարչապետը, Ադրբեջանի ու Ղրղզստանի էներգետիկայի փոխնախարարները, Սաուդյան Արաբիայի էներգետիկայի, արդյունաբերության և բնական պաշարների նախարարը:

Համաժողովին երկկողմ հանդիպումներ եմ ունեցել ՌԴ էներգետիկայի նախարար Ալեքսանդր Նովակի, Բելառուսի էներգետիկայի նախարար Վլադիմիր Պատուպչիկի, Ղազախստանի էներգետիկայի նախարար Կանատ Բոզումբաևի, Տաջիկստանի էներգետիկայի և ջրային պաշարների նախարար Ուսմոնզոդա Ուսմոալիի հետ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Օրակարգային բոլոր հարցերի վերաբերյալ խորհուրդն ընդունեց որոշումներ:

9. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

Ակտիվացնել աշխատանքներն ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդում: Շարունակել հետևողական աշխատանքը ԱՊՀ էլեկտրաէներգետիկական համակարգի հետ Վրաստանի էներգահամակարգի միջոցով զուգահեռ աշխատելու ուղղությամբ:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկան